

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

"....."2016 թ. N.....Ն

«ԵՐԵՎԱՆԻ ԲԺՇԿԱՀՈԳԵԲԱՆԱՄԱՆ ԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԵՎ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 64-րդ հոդվածի 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացված՝ Ստեփանավան քաղաքի Երիտասարդական 51/1 հասցեում գտնվող 377.7 հազ.դրամ սկզբնական արժեքով և 47.5 քառ. մետր ընդհանուր տարածքով վարչական մասնաշենքը, 5876,9 հազար դրամ սկզբնական արժեքով և 615.51 քառ.մետր ընդհանուր տարածքով ուսումնական մասնաշենքը, 510.4 հազար դրամ սկզբնական արժեքով և 49.76 քառ.մետր ընդհանուր տարածքով պահեստը, 22239,3 հազար դրամ սկզբնական արժեքով և 1246.08 քառ.մետր ընդհանուր տարածքով ճաշարանը, 1141,6 հազար դրամ սկզբնական արժեքով և 76.97 քառ.մետր ընդհանուր տարածքով նախկին ննջարանային մասնաշենքը, 256,0 հազար դրամ սկզբնական արժեքով և 8.55 քառ.մետր ընդհանուր տարածքով սանհանգույցը, 1141,6 հազար դրամ սկզբնական արժեքով և 118,26 քառ.մետր ընդհանուր տարածքով հաշվապահության մասնաշենքը, 657,3 հազար դրամ սկզբնական արժեքով և 78,66 քառ.մետր ընդհանուր տարածքով բուժ.կետը , 5920.2 հազար դրամ սկզբնական արժեքով և 289.44 քառ.մետր ընդհանուր տարածքով արհեստանոցը, 6533,5 հազար դրամ սկզբնական արժեքով և 274,3 քառ.մետր ընդհանուր տարածքով սպորտդահլիճը, 83,2 հազար դրամ սկզբնական արժեքով և 6,9 քառ.մետր ընդհանուր տարածքով տնտեսական սենյակը, 299,0 հազար դրամ սկզբնական արժեքով և 16.4 քառ.մետր ընդհանուր տարածքով լվացքատունը, 634,7 հազար դրամ սկզբնական արժեքով և 24 քառ.մետր ընդհանուր տարածքով կաթսայատունը, 420,0 հազար դրամ սկզբնական արժեքով և 65.8 քառ.մետր ընդհանուր տարածքով ծածկը հետ վերցնել և հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

2. Դադարեցնել «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կապանի և Ստեփանավանի մասնաճյուղերի /պետական հաշվառման համարները համապատասխանաբար՝ 27.060.01615/20009-12-26, 37.060.00618/2016-09-26 / գործունեությունը:

3. Սույն որոշման 2-րդ կետով նախատեսված գործընթացների ավարտից հետո «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 273.210.03501) վերակազմակերպել բաժանման ձևով՝ ստեղծելով «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

4. «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդներն են՝ բաժանիչ հաշվեկշիռի համապատասխան:

5. Սահմանել, որ՝

1) «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության՝

ա. առարկան կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համակարգումն է, ինչպես նաև երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման ու աջակցության միասնական հիմքերի ապահովումն է:

բ. նպատակը երեխայի կրթության իրականացման գործընթացում կրթական ծառայությունների մատչելիությունը, արդյունավետությունը և մասնակցային հնարավորությունները բարձրացնելն է:

2) «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝

ա. առարկան կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումն է:

բ. նպատակը իրենց սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է:

6. Թույլատրել՝

1) «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա. ուսումնական և մեթոդական գրականության մշակում և հրատարակում:

բ. դիդակտիկ նյութերի և պարագաների ստեղծում.

գ. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում 18-ից բարձր տարիքի (հանրակրթության մեջ չընդգրկված) անձանց.

դ. փորձագետ-մասնագետների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում.

ե. պետական ծրագրով չնախատեսված վերապատրաստումների կազմակերպում և անցկացում:

2) «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա. ուսումնական և մեթոդական գրականության մշակում և հրատարակում.

բ. դիդակտիկ նյութերի և պարագաների ստեղծում.

գ. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում 18-ից բարձր տարիքի (հանրակրթության մեջ չընդգրկված) անձանց.

դ. փորձագետ-մասնագետների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում:

7. «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը՝ նրան վերապահելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «ե» և «է» կետերով նախատեսված լիազորությունները:

8. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) ապահովել

ա. վերակազմակերպմամբ պայմանավորված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև ամրացվող և սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի ու արժեքների և բաժանիչ հաշվեկշիռի հաստատումը.

բ. սույն որոշմամբ վերակազմավորման միջոցով ստեղծված՝ «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների սովորողների՝ հանրակրթական ծրագրերով շարունակական ուսումնառության բնականոն գործընթացը.

2) սույն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հաստատել «Հանրապետական տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի

տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները և ապահովել պետական գրանցումը:

9. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը հանձնված պետական սեփականություն հանդիսացող՝ «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ամրացված Երևան քաղաքի Քաջազնունի 12 , Կապան քաղաքի Լեն Հանքեր 5 հասցեներում գտնվող և սույն որոշման 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը համապատասխանաբար անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններին:

10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետում և 9-րդ կետում նշված գործընթացի ավարտից հետո վեցամսյա ժամկետում «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել, սույն որոշման 9-րդ կետում նշված տարբեր հասցեներում գտնվող անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրեր՝ դրանում նախատեսելով, որ պայմանագրերից բխող նոտարական վավերացումը և գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացվելու են համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջոցների հաշվին:

11. «Հանրապետական տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կապված պետական գրանցման և կնիքի ձեռքբերման ծախսերը կատարել «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

12. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ ն օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելիվ երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, ինչպես նաև տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:

Օրենքով ամրագրվել է, որ երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները երրորդ՝ հանրապետական մակարդակում տրամադրվում են հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից, որը

1) սահմանում է մանկավարժահոգեբանական աջակցության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման միասնական մոտեցումը.

2) մշակում է մանկավարժահոգեբանական ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերը.

3) համակարգում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների աշխատանքները.

4) մշակում է գիտամեթոդական և ուսումնամեթոդական նյութեր և ուղեցույցներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժահոգեբանական մասնագետների համար.

5) կազմակերպում և իրականացնում է վերապատրաստումներ, տրամադրում մասնագիտական խորհրդատվություն.

6) ստեղծում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տվյալների բազա, իրականացնում տվյալների վերլուծություն և տալիս առաջարկություններ՝ քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ:

7) իրականացնում է օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ ու գործառույթներ:

Օրենքով ամրագրվել է, որ հատուկ դպրոցները, պետք է վերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք աջակցություն կտրամադրեն հանրակրթական դպրոցներին, կազմակերպելու համար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը: Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, որպես երկրորդ մակարդակ, պետք է մատուցեն անձի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական ծառայություններ (կազմակերպում, համակարգում) և իրականացնեն անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի համաձայն նախատեսվում է 2016 թվականի ընթացքում Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի վերակազմակերպում մանկավարժահոգեբանական աջակցության հանրապետական կենտրոնի ու դրա գործունեության ֆինանսավորման նոր համակարգի ներդրում, Սյունիքի մարզում 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում: «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները հիմնադրվել են Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցի և Գորիսի N1 հատուկ դպրոցի վերանվանելու միջոցով, իսկ «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվում է «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման արդյունքում՝ Կապանի մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու և դրա հիմքի վրա:

3. Ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունման արդյունքում հանրապետական մանկավարժահոգեբանական, ինչպես նաև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ստեղծմամբ նախատեսվում է կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համակարգում, ինչը կբարձրացնի կրթական ծառայությունների մատչելիությունը, արդյունավետությունը և մասնակցային հնարավորությունները՝ երեխայի կրթության իրականացման գործընթացում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտության չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» , «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիքների

<p align="center">Գերատեսչության անվանումը</p>	<p align="center">Դիտողություններ և առաջարկություններ</p>	<p align="center">Նշումներ կատարման վերաբերյալ</p>
<p align="center"><i>«Կարածքային կառավարման և զարգացման նախարարություն</i></p>	<p>1. Նախագծի 1-ին կետում նշված վերակազմակերպման գործընթացը բնորոշ է բաժանման ձևով վերակազմակերպմանը: Այս առումով՝ Նախագծի առաջին կետում «առանձնացման» բառը փոխարինել «բաժանման» բառով: 2. Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում «մանկավարժահոգեբանական աջակցության» բառերից հետո հանել «երրորդ» բառը և 2-րդ ենթակետում «պետական ոչ առևտրային կազմակերպությունները հանդիսանում են» բառերից հետո հանել «երկրորդ» բառը, հաշվի առնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածը, որտեղ ամրագրված է համապատասխան ծառայությունների տրամադրման երեք մակարդակ՝ դպրոցական մակարդակ, տարածքային մակարդակ և հանրապետական մակարդակ, իսկ «երկրորդ» և «երրորդ»-ը սահմանված մակարդակների ենթակետերի համարակալումն է: 3. Նախագծի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների, ինչպես նաև 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների բովանդակությունը անհրաժեշտ է, որ ուղղված լինի ՊՈԱԿ-ի գործունեության շրջանակներին, հակառակ դեպքում այն կվերաբերի այլ, նաև ՊՈԱԿ-ի գործունեության հետ չառնչվող ցանկացած բնագավառի: 4. Հստակեցնելու անհրաժեշտություն ունի Նախագծի 3-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերությունը, քանի որ պարզ չէ, թե ինչ է իրենից ներկայացնում պետական ծրագրով չնախատեսված վերապատրաստումը:</p>	<p>1. Ընդունված է:</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. 3-4 ընդունված չեն . «Կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 969-Ն և սեպտեմբերի 29-ի N 986-Ն որոշումներով սահմանված են նույն ձևակերպումները:</p>
<p align="center"><i>«Ֆինանսների նախարարություն</i></p>	<p>1. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ պետական կազմակերպության հիմնադիրը 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված իր լիազորությունները կարող է վերապահել լիազորված պետական մարմին: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Նախագծի 4-րդ կետում «կազմակերպություն» բառը փոխարինել «մարմին» բառով: 2. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Այս առումով, առաջարկում ենք Նախագծի 6-րդ կետում նախատեսել լիազորված պետական մարմնի կողմից ՊՈԱԿ-ների պետական գրանցումն ապահովելու վերաբերյալ դրույթ:</p>	<p>1-2 Ընդունված են:</p>

<p style="text-align: center;">ՀՀ կառավարության առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:</p>	<p>Ի պատասխան Ձեր 07.10.2016թ. թիվ 01/10/12440-16 գրության ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն առաջարկում է «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նախաբանում հղում կատարել նաև «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 63-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև նախատեսել դրույթ վերակազմակերպված պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող անշարժ գույքի և անհատույց օգտագործման պայմանագրերի կնքման վերաբերյալ:</p>	<p style="text-align: center;">Ընդունված են:</p>
<p style="text-align: center;">ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:</p>	<p style="text-align: center;">Դիպողություններ և առաջարկություններ չկան:</p>	
<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>Նախագիծն անհրաժեշտ է լրացնել նոր կետով՝ «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերի գործունեությունը դադարեցնելու մասին՝ նշելով դրանց ժամկետները:</p>	<p style="text-align: center;">Ընդունված է:</p> <p style="text-align: center;">«Երևանի բժշկահոգեբանամանկավարժական ն գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղերի գործունեությունը սահմանված կարգով կդադարցվի նախագծի 8- րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո:</p>
<p style="text-align: center;">ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը</p>	<p>Նախագծի առնչությամբ հայտնում ենք հետևյալը՝</p> <p>1. վերնագրում, ինչպես նաև 3-11-րդ կետերում «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» բառերով</p> <p>2. նախաբանում «հոդվածի 2-րդ և 3-րդ» բառերն առաջարկում ենք փոխարինել «հոդվածի 1-ին և 2-րդ», իսկ «հոդվածի 1-ին և 2-րդ կետերը» բառերը՝ «հոդվածի 1-ին և 2-րդ մասերը» բառերով,</p> <p>3. 2-րդ կետով տրվող հանձնարարականն անհրաժեշտ է վերահասցեագրել լիազոր պետական</p>	<p style="text-align: center;">Ընդունված են:</p>

	<p>մարմին՝ համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի,</p> <p>4. 4-րդ կետ՝</p> <p>1) նախաբանում «հանդիսանում է» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «երկրորդ՝» բառը,</p> <p>2) 1-ին ենթակետից անհրաժեշտ է հանել «հիմնական» բառը,</p> <p>3) 2-րդ ենթակետից անհրաժեշտ է հանել «երկրորդ՝ տարածքային մակարդակի աջակցության», ինչպես նաև «որոնք ներառում են՝» բառերը և «ա»-ից «է» պարբերությունները, քանի որ կենտրոնի կողմից իրականացվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ցանկը այս պահի դրությամբ հստակեցված չէ, ենթակա է սահմանման ՀՀ կառավարության մեկ այլ որոշմամբ, որը դեռևս գտնվում է շրջանառության փուլում,</p> <p>5. 5-րդ կետի 4-րդ ենթակետում «մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում» բառերով,</p> <p>6. 6-րդ կետում «պետական կազմակերպություն» բառերն անհրաժեշտ է փոխարինել «լիազորված պետական մարմին» բառերով՝ համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի,</p> <p>7. 7-րդ կետի ձևակերպումից ենթադրվում է, որ միայն հողատարածքն է հանդիսանում պետական սեփականություն, ուստի հստակ սահմանելու նպատակով՝ առաջարկում ենք «պետական սեփականություն հանդիսացող» բառերը նշել «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի» բառերից առաջ,</p> <p>8. 8-րդ կետ՝</p> <p>1) «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը,</p> <p>2) անհասկանալի է սեփականության իրավունքով շարժական գույքը հանձնվելու է հատուցելի, թե անհատույց հիմունքներով,</p> <p>3) գործարքից առաջացող</p>	<p>Կապանի մասնաճյուղում սովորող առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող</p>
--	--	--

	<p>հարկերի վերաբերյալ անհրաժեշտ է ստանալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարծիքը, 9. 9-րդ կետ՝ 1) առաջարկում ենք նախագծին կից ներկայացնել տեղեկատվություն Կապանի մասնաճյուղում սովորող աշակերտների հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառության հնարավոր բացասական հետևանքների մասին (տվյալ բնակավայրում այլ դպրոցի առկայության, հեռավորությունը բնակավայրից և այլն) 2) անհրաժեշտ է լրացնել նոր ենթակետ «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը ապահովելու վերաբերյալ, 10. 10-րդ կետի վերաբերյալ հայտնում ենք, որ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, 11. 11-րդ կետից անհրաժեշտ է հանել՝ 1) «դրանում նախատեսելով դրույթ այն մասին, որ պայմանագիրը կարող է լուծվել հիմնադրի կողմից՝ դրա մասին գրավոր ծանուցելով կազմակերպությանը» բառերը, քանի որ՝ ա. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը, բ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի համաձայն Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել գույքի անհատույց օգտագործման պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին, եթե ծանուցման այլ ժամկետ նախատեսված չէ պայմանագրով: 2) «պայմանագրի նոտարական վավերացման ու դրանից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին» բառերը, քանի որ ՀՀ</p>	<p>աշակերտների հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառությունը չի ունենա բացասական հետևանքներ, քանի որ աշակերտները սովորելու են տվյալ բնակավայրին մոտ գտնվող այլ հանրակրթական դպրոցում:</p>
--	---	---

	<p>քաղաքացիական օրենսգրքի 346-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պարտավորությունը պարտականություններ չի ստեղծում որպես կողմ չմասնակցող անձանց (երրորդ անձանց) համար:</p> <p>12. 12-րդ կետի վերաբերյալ առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել ոչ թե ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 18-ի N 682-Ն որոշումն ամբողջությամբ, այլ միայն դրա 2-րդ կետը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ որոշումը պարունակում է Կապանի մասնաճյուղի հետ ոչ փոխկապակցված վերակազմակերպման և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին դրույթներ,</p> <p>13. 13-րդ կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասին:</p> <p>««Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի՝ մինչդեռ նախագծով առաջարկվող լուծումը չի համապատասխանում վերոնշյալ հոդվածի պահանջներին:</p> <p>Ուստի առաջարկում ենք՝ որպես օրենսդրի սահմանած պահանջի կատարման հնարավոր տարբերակ քննարկել առանձնացման ձևով վերակազմակերպումը՝ «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կազմից առանձնացնելով «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:</p>	
--	---	--